ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿՐԹԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԴԵՐԸ ԱՆԳԼԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԵՐԻՆ*

Արևիկ Հարությունյան

Բանալի բառեր՝ ուսանող, ժամանակակից կրթական տեխնոլոգիա, մեթոդ, կարողություն, հմտություն, բանավոր խոսք:

ՄՄԿԾԿ (միջին մասնագիտական կրթական ծրագրերի կենտրոն) ուսանողների ուսուցման գործընթացում ժամանակակից կրթական տեխնոլոգիաների ներդրման նպատակը ուսանողների մոտ ոչ միայն կարողությունների և հմտությունների ձևավորումն է, այլ նաև անհատական հատկանիշների ձևավորումը, ինչը կապահովի ստացած գիտելիքների արդյունավետ օգտագործումը մասնագիտական գործունեության ընթացքում:

Այս համատեքստում բավականին հաջողված է այնպիսի անհատական ուղղվածություն ունեցող տեխնոլոգիաների կիրառումը, ինչպիսիք խնդիրների վրա վրա հիմնված նախագծերի կազմումն ու և տարատեսակ մեթոդների իրականացումն են: Վերջիններիս մեջ կառանձնացնեինք «Բանավեճ ուսումնական գործընթացում», «Խաղային», «Ընթերցանություն և գրավոր մտքի զարգացում» և այլ մեթոդներ՝ կախված դասախոսի հայեցողությունից:

ՄՄԿԾԿ-ում անգլերենի ուսուցման գործընթացում հիմնական ուշադրությունը պետք է դարձվի այսպես կոչված ընդհանուր առարկայական և մասնավոր առարկայական կարողություններին [1]:

Յուրաքանչյուր թեմայի ուսումնասիրման գործընթացում, առաջին հերթին, դրվում է տեքստին վերաբերող բառապաշարի մատուցումն ու դրա հետագա կիրառումը: Նպատակահարմար է թեմայի վրա աշխատելիս օգտագործել պայմանական խոսակցական և բուն խոսակցական վարժությունների համակարգը, ինչը, ըստ ամենայնի, կնպաստի առարկայական այնպիսի հմտությունների զարգացմանը, ինչպիսիք են դասի թեմայի վերաբերյալ մենախոսություն կազմելը, տրված և մինչ այդ ուսումնասիրված բառերի ու արտահայտությունների միջից հիմնական տեղեկության տարանջատումն ու սեփական կարծիքն արտահայտելը, ուսումնասիրվող թեմայի շրջանակներում հիմնական բառերի և արտահայտությունների հիման վրա իրականության գնահատումը և այլն:

Առանձնահատուկ ուշադրության են արժանի հետևյալ առաջադրանքները.

- *ասոցիատիվ աղյուսակների կազմում,*
- *թերի նախադասության ամբողջացում՝ հաշվի առնելով ուսանողի սեփական կարծիքը,*
- *աղյուսակների լրացում,*
- *տրված թեմայով դիագրամների կազմում,*
- *հարց ու պատասխանի ձևով վարժությունների կազմում,*

---

* Հոդվածն ընդունվել է 09.01.2016:
Հոդվածը տպագրության է երաշխավորել ՀԱԱՀ Ստեփանակերտի մասնաճյուղի «Հումանիտար առարկաների, ֆիզիկական կուլտուրայի ր ՆԶՊ-ի» ամբիոնը:

- հարցերին հիմնավորված պատասխանների ակնկալում,
- կյանքի փորձի կամ ավելի վաղ ստացած գիտելիքների հիման վրա որևէ իրավիճակի ստեղծում,
- սեփական դատողության կամ փաստերի վերաբերյալ կարծիքի հիմնավորում:

Հետագա պարապմունքների ժամանակ նախընտրելի է առաջնորդվել նաև հետևյալ մեթոդներով.

- մենախոսական կամ երկխոսական տեքստերի վրա աշխատանք,
- թեզերի իմաստավորում ու բացատրում,
- թեմայի խնդիրների վերաբերյալ հայտնի մարդկանց արտահայտությունների վերլուծություն:

Սա արդեն ինքնին արդարացված առաջադրանք է, որն ուղղված է անգլերենով մենախոսություն կազմելու կարողությունների զարգացմանը [2]:

Մեր փորձը թույլ է տալիս ենթադրել, որ անգլերենի դասախոսի նմանօրինակ գործունեության ընթացքում ուսանողների մոտ կազմավորվում են ընդհանուր առարկայական և զուտ առարկայական կարողություններ օտար լեզվի բնագավառում, առաջ են գալիս նոր կարողություններ ու հմտություններ՝ տարբեր ժանրերի ու ծավալի տեքստերի հետ աշխատելիս, տեքստի բովանդակության ընկալման ու դրա հետագա վերլուծման համար անհրաժեշտ հմտություններ: Սովորողներից շատերի մոտ ձևավորվում է նաև անգլերեն տեքստի թարգմանության, գլխավոր մտքի բացահայտմանն ուղղված ունակություններ: Եվ որ կարևոր է, ուսանողները կարողանում են տեքստի գլխավոր իրադարձությունները համեմատել իրականության հետ:

Այստեղ տեղին է գործածել նաև թեմայի վերաբերյալ բառապաշարի ավելացման և բանավոր խոսքում դրա հետագա կիրառման մեթոդը, որը կոչվում է «Ընթերցանություն և գրական խոսք» (այն կրիտիկական մտածելակերպի զարգացման տեսանկյունից նունպես օգտակար է) [3]: Սա կարելի է ներառել ուսումնական գործընթացում արդեն թեմայի ուսումնասիրման առաջին 2-3 պարապմունքների ընթացքում: Դա թույլ կտա ուսանողների մոտ զարգացնելու «ընթերցանության ռազմավարությունը», այն է՝ ընթերցած տեղեկության վերլուծություն, իմաստային ուղենիշների, տեղեկությունների հավուր պատշաճի առանձնացում, դրանց համեմատումը անհատական ու թիմային միջմշակութային համատեքստում և այլն:

Թեմայի բառապաշարի ակտիվացումից, ինչպես նաև տեքստերի հետ աշխատանքն ավարտելուց և քննարկվող խնդիրները ուսումնասիրելուց հետո ուսանողներին կարելի է առաջարկել հարցում կատարել դասախոսների և ուսանողների միջև տվյալ թեմայի շրջանակներում: Հարցերը կարելի է կազմել ուսանողների և դասախոսի հետ համատեղ: Հարցման անցկացման ժամանակ կարելի է օգտագործել լրացուցիչ գրականություն, վիճակագրական տվյալներ իրենց հասակակիցների մասին և այլն: Հարցման արդյունքներն ուսանողները կարող են դասախոսի օգնությամբ հետագա դասընթացների ժամանակ ներկայացնել համակարգչային շնորհանդեսների տեսքով:

Այսպիսով՝ տվյալ աշխատանքը կարելի է իրականացնել արտալսարանային և լսարանային աշխատանքի պայմաններում: Դրա արդյունքները ուսանողները ներկայացնում են տվյալ թեմայի վերջին պարապմունքներից մեկի ժամանակ: Ծրագրային այսպիսի գործունեության ձևը թույլ կտա ուսանողներին հմտություն ձեռք բերել անգլերեն հարցազրույց անցկացնելու ընթացքում, հարցման արդյունքները ներկայացնել մենախոսության և երկխոսության ձևով, մասնակցել տվյալ թեմայով տեղում ծրագրած բանավեճերին, պարապմունքի ժամանակ օտար լեզվով բանավոր խաղեր կազմա-

կերպելուն և այլն: Իհարկե բանավոր թեմայի վրա աշխատանքի կազմակերպման ժամանակ կարելի է օգտագործել նաև այլ մեթոդներ:

Անգլերենի պարապմունքների ժամանակ բանավոր խոսքի զարգացման համար ավելի քան հետաքրքիր են դերային խաղերը [4], որոնք նախաձեռնվում և կազմակերպվում են դասախոսի գլխավորությամբ թեմայի ուսումնասիրման առաջին 4-5 պարապմունքների ժամանակ: Դերային խաղերի ժամանակ ուսանողները կատարելագործում են արդեն ստացած հմտությունները, յուրացրած և հանպատրաստից երկխոսություն կազմելու կարողությունները, քաղաքագիտական արտահայտությունները տվյալ թեմայով, ինչպես նաև սովորում են ձևակերպել իրենց կարծիքը, դիրքորոշումն ընկերների հետ անգլերեն բանավեճերի ժամանակ:

Բանավեճեր վարելու ուսուցանումը կարելի է իրականացնել այն դեպքում, եթե ուսանողներն արդեն տիրապետում են ուսումնասիրվող թեմայի անհրաժեշտ բառապաշարին, ինչպես նաև օտար լեզվով հաղորդակցվելու համար անհրաժեշտ արտահայտություններին (հաջորդ 6-8 պարապմունքներ): Մեր կարծիքով՝ իմաստի ընկալման փուլում առավել ընդունելի է հանդիպակաց բանավեճի կիրառումը որպես մեթոդական հնարք: Բանավեճի արդյունքում ուսանողները հանգում են եզրակացությունների (էական չէ՝ դասախոսի ղեկավարությամբ,թե ինքնուրույն): Խմբերից յուրաքանչյուրը բանավեճի ավարտին շարադրում է դրանք:

Արդյունքների ամփոփման և բանավեճի վերլուծության փուլում ուսանողներին հանձնարարվում է թեստ՝ քննարկվող խնդիրների համակարգման և ուսանողների կողմից սեփական գիտելիքների և հմտությունների գնահատման համար: 9-րդ և 10-րդ պարապմունքների ընթացքում կարելի է կազմակերպել ուսումնասիրված նյութերի կրկնողություն և գիտելիքների հարստացում, իսկ եզրափակիչ՝ 11-12 պարապմունքների ընթացքում ամփոփվում են թեմայի վերաբերյալ ուսանողների աշխատանքները, ցանկալի է հանձնարարել ուսումնասիրված թեմայի շրջանակներում բառապաշարի ստուգման կամ տեքստային թելադրություն, ուղղագրական թեստ, դերերի փոփոխությամբ ստուգել երկխոսության, մենախոսության, բանավոր հաղորդակցության ունակությունները և այլն:

Այսպիսով՝ օտար լեզվով հաղորդակցվելու ուսուցման գործընթացում ժամանակակից կրթական տեխնոլոգիաների համալիր կիրառումը ՄՄԿԾԿ-ներում հնարավորություն է տալիս ուսումնական պարապմունքներ կազմակերպելու ճանաչողաորոնողական հիմքի վրա, նրանց նպատակաուղղելու ինքնուրույն ստեղծագործական աշխատանքի:

Ի դեպ, ներկայումս լայն կիրառություն է ստանում նախագծերի մեթոդը: Այն թույլ է տալիս տարբեր բնագավառներից սովորողների ստացած գիտելիքները միավորել անհրաժեշտ խնդրի լուծման նպատակով՝ դրա հետ միասին առաջ բերելով նոր գաղափարներ:

Անգլերենի ուսուցման բնագավառում այս մեթոդի արդիականությունը պայմանավորված է ուսուցման ակտիվ մեթոդների կիրառման անհրաժեշտությամբ: Այդ մեթոդներից է հենց նախագծի մեթոդը, որն ուսանողներին հնարավորություն է ընձեռում ներգրավելու նախագծման, կառուցողական, մոդելավորման և հետազոտման գործընթացներում:

Նախագիծ կազմելը համարվում է ապագա մասնագետի պատրաստման բաղկացուցիչ մաս և ունի իր նպատակները.

- Տեսական գիտելիքների և գործնական հմտությունների համակարգում, ամրապնդում և խորացում,

- Ինքնուրույն աշխատանքի ձևերի և մեթոդների կատարելագործում, գիտահետազոտական գործունեության մեթոդիկայի տիրապետում և ստացված արդյունքների գրավոր տեքստով ներկայացման ու ձևավորման հմտությունների մշակում.
- Շրջանավարտի՝ գյուղատնտեսության ոլորտում ստեղծագործական գործունեության պատրաստվածության աստիճանի հստակեցում:

Կախված տրված առաջադրանքների բնույթից՝ նախագիծը կարող է օգտագործվել՝

- որպես ամբողջ կուրսի կամ ծրագրային նյութի որևէ բաժնի ամփոփիչ պարապմունքի տարբերակ,
- որպես ստեղծագործական յուրահատուկ աշխատանք, որը լսարանային և արտալսարանային գործունեության ընթացքում առաջարկվող ուսումնական նյութն ավելի խորությամբ յուրացնելու հնարավորություն է տալիս:

Մեթոդի առավելություններից մեկն էլ նախագծերի կատարման ընթացքում ուսանողների մոտ ինքնուրույնության և առաջադրանքների կատարման համար հաստատակամության ձևավորումն է, որի արդյունքում ձեռք են բերվում գործունեության պլանավորման ունակություններ: Մեթոդը միաժամանակ ակտիվացնում է ինքնակրթության վրա աշխատանքը, որն իր հերթին խթանում է ստեղծագործելու ունակությունները:

Ուսանողները սովորում են ոչ միայն նախագծել, այլև ղեկավարել գյուղատնտեսական նախագծերի մշակման գործընթացը, որովհետև նախագծային գործունեության ձևավորման փորձն իրականացվում է ինչպես քոլեջում՝ ուսումնական պարապմունքներին, այնպես էլ ուսումնական փորձուսուցման տարբեր ձևերի անցկացման ընթացքում:

Անգլերենի դասախոսների նախագծային գործունեության ղեկավարման պատրաստվածության արդյունավետությունը որոշում են հետևյալ պայմանները.

- Ուսանողների մասնագիտական պատրաստվածության գործում ստեղծագործական աշխատանքի առավել ներդրումը.
- Առարկայական մակարդակով «գաղափարների բանկի» ձևավորումը, դրանց պարբերաբար և հետևողական համալրումը:
- Կուրսային և ավարտական որակավորման աշխատանքների թեմաներում նախագծային ստեղծագործական տարրերի ներառումը:

Մասնակցելով նախագծային աշխատանքներին՝ ուսանողները ցուցաբերում են հետազոտման հիմնական մեթոդների տիրապետում, համակարգչային գրագիտություն տարբեր առարկաներից նախկինում ստացած գիտելիքները համադրելու ունակություններ՝ դրանք օգտագործելով ճանաչողական առաջադրանքների ընթացքում:

Ստեղծագործական խմբի մաս կազմելով՝ ուսանողը նախագծի ստեղծման աշխատանքի ընթացքում ոչ միայն համագործակցության փորձ է ձեռք բերում, ձևավորում համագոր-ծակցության սկզբունքների սեփական պատկերացումը, այլև ստացած գիտելիքներն օգտագործում է տվյալ գործընթացում:

Քոլեջի դասախոսից պահանջվում է ոչ միայն առարկայի կատարյալ տիրապետում, այլ նաև որոշակի աստիճանի դերասանական վարպետություն: Մեծանում է ուսանողի հետ նրա խորհրդատվության և երկխոսության ծավալը: Այժմ արդեն դասախոսի հեղինակությունը հիմնվում է ուսանողի մտավոր ակտիվությունը խթանելու ունակության վրա: Հանուն նախաձեռնած նախագծային գործի հաջողության՝ այժմ արդեն ուսանողն ինքն է դրանում շահագրգռված:

Այսպիսով՝ ժամանակակից մանկավարժն առաջին հերթին ճանաչողական գործընթացի կազմակերպիչ է, համակարգող և օգնական:

Ընդհանրացնենք նախագծերի մեթոդի օգտագործման հիմնական պահանջները.

1. *Հետազոտություն և որոնողական աշխատանք պահանջող, ստեղծագործական բնույթ ունեցող առաջադրանքի առկայություն.*
2. *Տեսական և գործնական նշանակություն ունեցող ենթադրվող արդյունքներ.*
3. *Անգլերեն լեզվի պարամունքին ուսանողների ինքնուրույն (անհատական, զույգերով, խմբային) գործելու ունակություն.*
4. *Նախագծի բովանդակային մասի՝ ըստ կառուցվածքի պլանավորում:*
5. *Հետազոտական մեթոդների օգտագործում:*

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Standards for Foreign Language Learning in the 21st Century, 1999. Borrowed from: http://globalteachinglearning.com/standards/5cs.shtml on August 20, 2009.
2. Rebecca Benoit, Bridget Haugh. Team Teaching Tips for Foreign Language Teachers. Borrowed from: http://iteslj.org/Techniques/Benoit-TeamTeaching.html on August 20, 2009.
3. Suntsova, E.N., Burmakova, E.A. The Use of case Study Method in Foreign Language Teaching // Прикладная филология: идеи, концепции, проекты: Сб. ст. VI Межд. научно-практич. конф., Часть 1. – Томск: Издательство ТПУ, 2008, стр. 87-94.
4. Ybarra, R., & Green T. (2003). Using technology to help ESL/EFL students develop language skills. The Internet. TESL Journal, 9(3). Retrieved from http://iteslj.org/Articles/Ybarra-Technology.html

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Միջին մասնագիտական կրթական ծրագրերի կենտրոններում ժամանակակից կրթական տեխնոլոգիաների դերը անգլերենի ուսուցման ժամերին

Արևիկ Հարությունյան

Միջին մասնագիտական կրթական ծրագրերի կենտրոնում օտար լեզվի ժամերին ժամանակակից կրթական տեխնոլոգիաների ներդրման նպատակը ուսանողների մոտ ոչ միայն կարողությունների և հմտությունների ձևավորումն է, այլ նաև անհատական հատկանիշների ձևավորումը, ինչը կապահովի ստացած գիտելիքների արդյունավետ օգտագործումը մասնագիտական գործունեության ընթացքում:

РЕЗЮМЕ

Роль современных образовательных технологий в процессе обучения английскому языку

Аревик Арутюнян

Ключевые слова: *студент, современные образовательные технологии, метод умения, навык, устная речь.*

Целью использования современных образовательных технологий в процессе обучения студентов английскому языку в центре среднеспециальных образовательных программ

является не только формирование умений и навыков у студентов, но и выработка индивидуальных качеств. Это будет способствовать более эффективному использованию полученных знаний в процессе профессиональной деятельности.

SUMMARY
The role of modern educational technology
in the process of teaching English
Arevik Harutyunyan

Keywords: *Student, modern educational technologies, ability, skill, oral speech*

The application of modern educational technology in teaching English to students of the Center for secondary special education programs not only shapes students' skills, but also develops personal qualities. This promotes more effective use of knowledge gained in the course of professional activities.